

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԲՈՆԱԳՐԱԿՈՒԵՅԱԼ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԿՈՂՄԷ

ՅՈՒՆՈՒՐ 2024-ԻՆ ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԲՈՆԻ ՈՒԺԻ ՆԵՐՔՈՅ ԿԸ ԴԱԴՐԻ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԼԷ. ԱՐՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՅԸ ԶՐԱՍԱՆԱԳԻՐ ԿԸ ՍՏՈՐԱԳՐԷ

Ատրպեյճանի կողմէ Արցախի Հանրապետության բռնագրաւումը եւ Արցախի ժողովուրդին բռնի տեղահանումը իր լրումին հասաւ ողջ աշխարհին աչքին առջեւ:



Արցախի Հանրապետության նախագահ Սամուել Շահրամանեան հրամանագիր ստորագրեց 19 Սեպտեմբերէն վերջ ստեղծուած իրավիճակէն բխող գործողութիւններուն մասին: Համաձայն հրամանագիրին, ստեղծուած ռազմաքաղաքական ծանր իրավիճակին լոյսին տակ՝ մեկնելով Արցախի ժողովուրդի ֆիզիկական անվտանգութեան եւ կենսական շահերու ապահովման առաջնահերթութենէն, ինչպէս նաեւ նկատի առնելով ռուսական խաղաղապահ ուժերու հրամանատարութեան միջնորդութեամբ ձեռք բերուած պայմանաւորուածութիւնը, Ատրպեյճանի Հանրապետութեան ներկայացուցիչներուն հետ պայմանաւորուելով, որ Լեռնային Ղարաբաղի բնակիչներուն՝ զենքերը վար դրած զինուորականներուն ազատ, կամաւոր եւ անխոչընդոտ

Շար.՝ Էջ 3 >

ԱՏՐՊԵՅՃԱՆՅԻՆԵՐԸ ԳԵՐԵՎԱՐԱԾ ԵՆ ԴԱԻԹ ԻՇԽԱՆԵԱՆԸ, ԲԱԿՕ ՍԱՀԱԿԵԱՆԸ, ԱՐԿԱՏԻ ՊՈԿԱՏԵԱՆԸ ԵՒ ԱՐԱՅԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԸ

3 Հոկտեմբերին, «Արցախփրես» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ ատրպեյճանական պաշտօնական աղբիւրները կը հաստատեն, որ Արցախի նախկին նախագահներ՝ Արկատի Ղուկասեան (1997-2007 թթ.), Բակո Սահակեան (2007-2020), Արայիկ Յարութիւնեան (2020-2023թթ.), Ազ-



Ռուբէն Վարդանեան



Դաւիթ Իշխանեան



Արայիկ Յարութիւնեան



Արշաւիր Ղարամեան



Լեւոն Մնացականեան



Դաւիթ Մանուկեան



Դաւիթ Պապայեան



Բակո Սահակեան



Արկադի Ղուկասեան

գային ժողովի նախագահ Դաւիթ Իշխանեան գերեվարուած ու տեղափոխուած են Պաքո:

ԼՂ Ան նախկին քարտուղար Վիտալի Բալասանեանի ճակատագիրը առայժմ անյայտ է:

Շար.՝ Էջ 3 >

ԱՐՅԱՆԻ ԶՈՐԱԿՅԱԿԱՆ ԱՐՕԹՔ ԿԱՏԱՐՈՒԵՅԱԼ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՉ

Արցախ աշխարհին դիմագրաւած վերջին աղետը ծանր հետեւանքներ ունեցաւ մեր ժողովուրդին համար՝ ստեղծելով անորոշութեան մթնոլորտ: 20-րդ դարու առաջին Յեղասպանութիւնը հայ ժողովուրդին դէմ կրկնուեցաւ 21-րդ դարուն: Դարձեալ նահատակներ, քանդուներ եւ քարոյր... Դա-



րեր շարունակ հայու արիւնով, արցունքով ու ստեղծագործ ոգիով շաղախուած Արցախը կը գտնուի թշնամիին արիւնոտ ձեռքերուն մէջ: Մեր ժողովուրդը չէ յուսահատած, որովհետեւ, ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ «յոյսը երբեք անօթով չի ձգեր» (Հռ 5.5): Հայ ժողովուրդը, Աստուծոյ օրհնութեամբ, կառչած է իր ամուր հաւատքին ու վճռականութեան: Քրիստոս խաչնով կերտեց յարութիւնը: Այսօր, Վարազայ Ս. Խաչի տօնին, մեր ժողովուրդը կոչուած է իր հաւատքն ու յոյսը ամուր պահելու՝ նայելով Խաչեալին ու խաչէն ճառագայթող հզօր պատգամին:

Արդարեւ, Կիրակի, 1 Հոկտեմբեր 2023-ին, Վարազայ Ս. Խաչի տօնին եւ Արցախի ու արցախահայութեան գորակցութեան օրունան առիթով, նախագահութեամբ ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսին, Անթիլիասի Մայրավանքի

Շար.՝ Էջ 12 >

ՀԱՍՏԶԳԱՅԻՆ ԱՐՕԹՔԻ ՕՐ

ԱՐՅԱՆՆԱՅՈՒԹԵԱՆ ԲԱՐՕՐՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Ընդառաջելով ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին Արցախի գորակցութեան կոչին, Կիրակի, 1 Հոկտեմբեր 2023-ին, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Աշգարեանի տնօրինումով, Թեմի ողջ տարածքին՝ Հալեպի, Ճեզիրէի, Լաթաքիոյ եւ Զեսապի բոլոր եկեղեցիներէն ներս, որպէս խնկարոյր աղօթք Սուրբ եւ Ամմահ Պատարագ մատուցուեցաւ՝ արցախահայութեան բարօրութեան համար, ապա նաեւ Հոգեհանգստեան Պաշտօն կատարուեցաւ, Արցախի նահատակներու հոգիներուն խաղաղութեան համար:

Եկեղեցիներու օրհնաբեր կամարներուն ներքեւ բարեպաշտ ժողովուրդը, միասիրտ եւ միահոգի, ի խորոց սրտի աղօթք բարձրացուց առ Բարձեալն Աստուած՝ շուռափոյթ ապաքինում մաղթելով Արցախի վիրաւորներուն եւ բարօրութիւն ու խաղաղութիւն՝ տագնապի մէջ գտնուող արցախահայութեան, հայցելով, որ Ամե-



Շար.՝ Էջ 12 >

Խմբագրական

ԱՏՐԴԵՅՃԱՆ ԿԸ ԶԱՆԱՅ ՏԱՊԱԼԵԼ ԱՐՅԱՆԻ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆԵՐԸ

Արցախի Հանրապետության նախկին նախագահները եւ Ազգային ժողովի նախագահը ապօրինաբար առեւանգելու եւ գերեզմանները Ատրպեյճանի քայլը յուստակորեն ուղղուած է Արցախի Հանրապետության գոյութեան օրինական հանգամանքի չեզոքացման:

Ատրպեյճան լաւ գիտէ, որ Արցախի Հանրապետութիւնը Սովետական Միութեան փլուզումէն ետք, հանրաքուէով, օրինականօրէն ձեւաւորուած պետութիւն է, ունի իրաւական հիմքեր, հետեւաբար միայն Արցախի վերջին նախագահին ստորագրութեամբ կարելի չէ օրինականօրէն լուծարել Արցախի Հանրապետութիւնը, թէ եւ զինուորական առումով, ներկայ պահուն, Ատրպեյճան այդ հարցը լուծած կը համարէ:

Ուստի Արցախի նախորդ նախագահներն ու Ազգային ժողովի նախագահը ձերբակալելով, Ատրպեյճանի բռնապետական իշխանութիւնը պիտի ջանայ մահուան սպառնալիքով ստիպել Արցախի նախագահները ստորագրելու այնպիսի փաստաթուղթ, համաձայն որուն երբեւէ գոյութիւն չէ ունեցած կամ այլեւս չունի Արցախի անկախ Հանրապետութիւն, ապա անցնելու Արցախի Հանրապետութեան տնտեսական եւ մշակութային քայքայման:

Պետութիւն մը, սակայն, ինքնալուծարումի չենթարկուիր նախագահի ստորագրութեամբ, որովհետեւ իշխանութիւնը կը պատկանի ժողովուրդին, իսկ ներկայիս, բոլորս գիտենք, որ ժողովուրդը բռնի տեղահանուած է, իսկ ձերբակալուածներուն նկատմամբ բռնի ուժ կը կիրարկուի:

Յստակ է՝ Ատրպեյճանի համար անհրաժեշտ է որ ե՛ւ Հայաստանը, ե՛ւ Արցախը ստորագրեն Արցախի պետութիւնը չեղեալ համարող փաստաթուղթ:

Այս բոլորին կողքին, Ատրպեյճան Արցախի քաղաքական եւ զինուորական առաջնորդները կ'անուանէ «ահաբեկիչներ», որպէսզի արդարացնէ իր բռնարարները անոնց նկատմամբ: Յաւուր այս եզրոյթը դատապարտող ոչ մէկ ձայն հնչեց հայկական կողմէն:

Միթէ ԵԱՀԿ Մինսքի համանախագահները ահաբեկիչներո՞ւ հետ կը բանակցելին տասնամեակներ շարունակ: Ասիկա բառացիօրէն արհամարհանք է ցարդ տարուած բանակցութիւններուն եւ հարցի լուծման մէջ միջազգային դերակատարներուն: Միջազգային գործընթացները արհամարհելու Ատրպեյճանի այս քայլը կարելի է բարձրացնել տարբեր հարթակներու վրայ ու կասեցնել «ահաբեկիչ» եզրոյթի օգտագործումը՝ գէթ գերեզմաններուն կեանքը փրկելու:

Արցախի ժողովուրդն է իր անկախ պետականութեան կերտիչը: Անոր քուէն կարելի չէ արհամարհել առնուազն քաղաքականօրէն: Հայաստանի Հանրապետութիւնը յստակ դիրքորոշում պետք է ունենայ Արցախի պետութեան նկատմամբ ու չստորագրէ այնպիսի փաստաթուղթ, որ Արցախի պետութիւնը անհիմն կը համարէ:

«Գ.»

-Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատ հարցազրոյց ունեցաւ «CCTV» Չինաստանի պաշտօնական պատկերասփիւռային կայանին հետ:


Հարցազրոյցին ընթացքին նախագահ Ասատ ըսաւ. «19 տարի առաջ Չինաստան մեր այցելութենէն մինչեւ օրս իսկապէս զարգացումներ եւ յառաջընթաց արձանագրուած են, նոյնիսկ համեմատական տոկոսներով դժուար է ճշդել զանոնք, որովհետեւ փոփոխութիւնները իսկապէս ծաւալուած են:

Կ'ըսուի, թէ Չինաստան աշխարհի գործարանն է, կամ ապրանք արտադրող համաշխարհային գործարան է, իսկ ես կ'ըսեմ, որ Չինաստան ստեղծագործութեան գործարանն է: Միւս կողմէ, Չինաստանի ժողովուրդը ճանչցուած է իր երկիրը սիրելու յատկութեամբ, պարզ է, որ իւրաքանչիւր ժողովուրդ կը հպարտանայ իր երկիրով, սակայն Չինաստանի ժողովուրդին հպարտութիւնը շատ անելի յառաջացած փուլի հասած է՝ շնորհիւ Չինաստանի իրականացուած ձեռքբերումներուն: Միակ արժէքները, որոնք փոփոխութեան չեն ենթարկուած Չինաստանի մէջ մշակոյթն ու ժողովուրդին պատկանելիութիւնն են՝ պատկանելիութիւն երկրին, միջավայրին, օրէնքներուն եւ սովորութիւններուն: Այս մէկը ինքնին ձեռքբերում է, որովհետեւ մեծաթիւ պետութիւններ կը զարգանան, կը յառաջանան, սակայն անոնցմէ քիչեր կը պահեն իրենց ինքնութիւնը»:



-Սուրիոյ Հանրապետութեան նախագահութիւնը շնորհաւորեց

Չինաստանի ժողովուրդն ու ղեկավարութիւնը՝ Չինաստանի ազգային տօնին առիթով, անորադառնալով Չինաստանի ձեռքբերումներուն եւ արձանագրած յառաջընթացին, Յիշենք, որ Չինաստան իւրաքանչիւր տարուայ Հոկտեմբեր 1-ին կը նշէ ազգային տօնը Չինաստանի ժողովրդական Հանրապետութեան, որ հիմնադրուեցաւ 1949-ին:



-Սուրիոյ կառավարութիւնը իր հերթական նիստին ընթացքին շեշտեց,

որ իւրաքանչիւր նախարարութիւն քայլ պիտի առնէ Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատի Չինաստան այցելութեան ընթացքին տեղի ունեցած համաձայնութիւնները, ներառեալ տնտեսական գործակցութիւնը, կեանքի կոչելու:



-Երկուշաբթի, 2 Հոկտեմբեր 2023-ի գիշերուան ժամը 23:50-ին Իսրայէլ օդային յարձակում մը գործեց ՏԵՐ Զօրի շրջակայքը գտնուող սուրիական բանակի կեդրոններուն վրայ:

Յարձակումին հետեւանքով երկու զինուոր վիրաւորուեցաւ եւ նիւթական վնասներ արձանագրուեցան:



-Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատի դիմաց երդման արարողութիւն կատարեց Սուրիոյ Հանրապետութեան Թունուսի դեսպան Մուհամմետ Մուհամմետ:

Յետ երդման արարողութեան, նախագահ Ասատ ընդունեց դեսպան Մուհամմետը, անոր ցուցմունքներ տուաւ եւ յաջողութիւն մաղթեց ստանձնած նոր պաշտօնին մէջ:

Երդման արարողութեան ներկայ գտնուեցան Սուրիոյ արտաքին գործոց նախարար դոկտ. Ֆայսալ ալ-Մըքտատ եւ Սուրիոյ Հանրապետութեան նախագահական հարցերու նախարար Մանսուր Ազգամ:



Լուրեր Հայաշխարհին

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ Ե ԲՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒՄԸ 100 ՀԱՉԱՐ 617 ԱՆՁ

Լեռնային Ղարաբաղին 3 հոկտեմբերի տեղույն ժամը 12:00-ի դրությամբ Հայաստան տեղափոխուած է բռնի տեղահանուած 100 հազար 617 անձ:

Այս մասին 3 հոկտեմբերին «Մարդասիրական Կեդրոն»-ին մէջ կայացած ասուլիսին յայտնեց Հայաստանի վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Պաղտասարեան:

Անոր խօսքին համաձայն, երթեւակային միջոցներուն թիւը կը կազմէ 21 հազար 191: «Այս ժամու դրութեամբ յաւելում ունինք արդէն հաշուառուածներու մէջ. այդ թիւը կը կազմէ 91 հազար 918», ըսաւ Պաղտասարեան:



Լեռնային Ղարաբաղէն բռնի տեղահանուածներուն աւելի քան 50 տոկոսը ՀՀ տարբեր մարզերու մէջ օգտուած է պետական աջակցութեան կէտքովայրերէն:

Պաղտասարեան անդրադարձաւ նաեւ 100 հազարական դրամներու տրամադրումը ու յիշեցուց, որ անկախ մարդոց համար, որոնք ունին դրամատնային, քարտային հաշիւներ, գործընթացը աւելի հեշտ պիտի ըլլայ: Ան յիշեցուց՝ դրամատնային քարտի հաշիւի բացումը պիտի ըլլայ անվճար:

ԱՉԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ՎԱԵՐԱՅՈՒՅ ՀՈՈՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

«Արմէնփրես»... Ազգային ժողովը վաւերացուց Հոռոմի կանոնադրութիւնը (Հոռոմի ստատուսը): Հոռոմի կանոնադրութիւնը վաւերացանելու մասին նախագիծը ընդունուեցաւ Ազգային ժողովի նիստին՝ ստանալով 60 կողմ, 22 դէմ, 0 ձեռնպահ ձայներ:



«Հայաստան» եւ «Պատիւ Ունենա» խմբակցութիւնները դէմ քուէարկած են նախագիծին: Աւելի ուշ, Սահմանադրական դատարանը ճանչցած էր սահմանադրութեան համապատասխանող 17 Յունիս 1998-ին ստորագրուած՝ Միջազգային քրեական դատարանի Հոռոմի կանոնադրութեան մէջ ամրագրուած պարտաւորութիւնները: 2022 թուականին այս հարցով Սահմանադրական դատարանն դիմած է Կառավարութիւնը: Աւելի ուշ գործադիր մարմինը Միջազգային քրեական դատարանի Հոռոմի կանոնադրութիւնը (Հոռոմի ստատուս)

ԱՐՅԱՆԻ ...

Սկիզբ՝ էջ 1
ճանապարհորդութիւնը ապահովուած է Լաչինի միջանցքի երկայնքով մեքենաներու վրայ իրենց գոյքով եւ առաջնորդուելով Լեռնային Ղարաբաղի Սահմանադրութեան 93-րդ յօդուածով, որոշուած է:
1. Մինչեւ 1 Յունուար 2024-ը կը լուծարուին իրենց գերատեսչական ենթակայութեան բոլոր պետական հիմնարկները եւ կազմակերպութիւնները, եւ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետութիւնը կը դադար գոյութիւն ունենայէ:
2. Լեռնային Ղարաբաղի բնակչութիւնը՝ հանրապետութենէն դուրս գըտնուող բնակչութիւնը, սոյն հրամանագիրի գործադրութեան տակ դրուելէն վերջ կը ծանօթանայ Ատրպէյճանի Հանրապետութեան կողմէն ներկայացուած վերահամարկումի պայմաններուն՝ անկախ եւ անհատական որոշում կայացնելու նպատակով ապագային Լեռնային Ղարաբաղի մէջ ապ-

նուարկած էր Ազգային ժողով՝ վաւերացումի: Ազգային ժողովի պետական-իրաւական հարցերու մշտական յանձնաժողովը արդէն իսկ ընդունած է նախագիծ եւ անկախ ընդգրկուած է Ազգային ժողովի հերթական լիագումար նիստի օրակարգին վրայ:

Ազգային ժողովին վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարած է, որ Հոռոմի կանոնադրութիւնը պիտի վաւերացուի ամբողջութեամբ: Կառավարութիւնը կրկին վերահարձած է Հոռոմի կանոնադրութեան ճանաչման հարցին, քանի որ, ըստ այս նախագիծի հիմնաւորման, կարելիութիւն կը տեսնէ Ատրպէյճանը պատասխանատուութեան կանչելու:

ԼԱՐՐՈՎ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԸ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՄԱՍ ԴԱՐՉՆԵՆՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ ՏՐՈՒՄԸ Ե ՓԱՇԻՆԵԱՆԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՄԲ. ՓՈՒԹԻՆ ԱՆՈՐ ԶԷ ԱՏԻՊԱԾ ԴԱՐԱՔԱՂԸ ՅԱՆՉՆԵՆ ԱՏՐՊԵՅՃԱՆԻՆ»

Լեռնային Ղարաբաղը Ատրպէյճանի մաս դարձնելու որոշումը տրուած է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի անմիջական մասնակցութեամբ: Այս մասին, ինչպէս կը գրէ ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը, լրագրողներու հետ գրոյցի ընթացքին յայտնած է Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրով:



«Երեւանեան գործիչներու յայտարարութիւնները, թէ Փութինը, 2020 թուականի Նոյեմբերին պատերազմը դադարեցնելու մասին համաձայնութիւնը ստորագրելով, Փաշինեանին ստիպած է՝ Ղարաբաղը յանձնել Ատրպէյճանին, սուտ են», յայտնած է Լաւրով:

Անոր համաձայն, 9 Նոյեմբերի յայտարարութեան մէջ յիշուած էր, որ Լեռնային Ղարաբաղը ռուսական խաղաղապահ զօրակազմի պատասխանատուութեան գօտին է: Աւելին՝ կար ընդհանուր ըմբռնում, որ Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակին շուրջ երկխօսութիւնը պիտի շարունակուի, սակայն հետագային Փրակայի մէջ կայացած բանակցութիւններուն հիմամբ Հայաստանի Հանրապետութիւնն ու Ատրպէյճանը ճանչցած են իրարու տարածքային ամբողջականութիւնը, ինչով ալ հարցը փակուած է:

«Երբ 1 կամ 1,5 տարի ետք Փրակայի մէջ կայացած հերթական եւրոպական վեհաժողովի մը ընթացքին Փաշինեանը ստորագրեց փաստաթուղթի մը տակ, որուն մէջ կ'ըսուի, որ Հայաստանն ու Ատրպէյճանը կը ճանչնան իրարու 1991 թուականի սահմանները Ալմա Աթայի հռչակագիրին համաձայն, այդ հարցը փակուեցաւ», ըսած է ռուսական դիւանագիտութեան պետը:

Անդրադառնալով Հայաստանի ՀԱՊԿ-էն դուրս գալու հարցին՝ Լաւրով յայտարարած է. «Եթէ, ինչպէս յայտարարած են Հայաստանի որոշ ղեկավարներ, հիմա, հիասթափուելով Ռուսիայէն եւ ՀԱՊԿ-էն, անոնք այլ տեղ պիտի նային ամրապնդելու իրենց անվտանգութիւնը, ատիկա պիտի ըլլայ անոնց գերիշխան ընտրութիւնը, Հայաստանի ղեկավարութեան ընտրութիւնը»:

Լաւրով միեւնոյն ժամանակ ըսած է, թէ Մոսկուան յոյս ունի, որ «ռուս եւ հայ ժողովուրդներու դարաւոր կապերը չեն քանդուիր»:

րելու (վերադառնալու) կարելիութեան մասին. Սոյն հրամանագիրը գործադրութեան կը դրուի հրապարակման պահէն անմիջապէս վերջ:

ԱՏՐՊԵՅՃԱՆՅԻՆԵՐԸ ...

Սկիզբ՝ էջ 1
Անցնող օրերուն Ատրպէյճան գերեվարած էր նաեւ Արցախի Պաշտպանութեան բանակի հրամանատարի նախկին առաջին տեղակալ Դաւիթ Մանուկեան, Արցախի պետական ու ռազմական գործիչներ՝ պետնախարար Ռուբէն Վարդանեան, ՊԲ նախկին հրամանատար, զօրավար Լեւոն Մնացականեան, Արցախի նախկին արտաքին գործոց նախարար, նախագահի խորհրդական Դաւիթ Բաբայեան եւ Արցախի Ազգային Անվտանգութեան Ծառայութեան նախկին պետ Արշալիր Դահրամեան:

Թուրքիոյ նուրջ

ՔԱԿ ԱՏԱՆՁՆԵՅ ԹՈՒՐԵՒՈՅ ՆԵՐՔԻՆ ՎՈՐՏՈՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ՅԱՐՁԱԿՈՒՄԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԻՒՆԸ

Թուրքիոյ ներքին գործոց նախարար Ալի Եարլը Քայա յայտնեց, որ 1



3 ո կ տ Ե Բ Ե ր ի առաւօտեան ժամը 9:30-ի շուրջ երկու «ահաբեկիչներ» ռումբերով յարձակում գործած են Ներքին գործոց նախարարութեան անվտանգութեան ընդհանուր տնօրէնութեան մուտքին վրայ:

Չինեայներէն մէկը ինքզինք պայթեցուցած է, իսկ երկրորդը ոստիկանութեան հետ զինեալ բախումի ընթացքին սպանուած է:

Աւելի ուշ, ՔԱԿ ստանձնեց անձնասպանական գործողութեան պատասխանատուութիւնը:

ԹՈՒՐԵՒՈՅ ՄԵՋ ԱԶԱՐԵԿՉՈՒԹԵԱՆ ԿԱՍԿԱԾՈՎ ՉԵՐԲԱՎԱԼՈՒԹՅ Է ԱՒԵԼԻ ՔԱՆ 900 ԱՆՁ

Թուրքիոյ ապահովական ուժերը լայնածաւալ գործունէութեամբ ահաբեկչութեան հետ առնչութիւն ունենալու կասկածով ձերբակալած են աւելի քան 900 անձ:

Այս մասին կը հաղորդէ «Արմենիա»-ը վկայակոչելով թրքական լրատուամիջոցները:



Թ ու ր ք ի ո յ Ներքին գործոց նախարարութեան փոխանցմամբ, այսպիսի հալածանք ընթացք առած է 64 նահանգի մէջ, հարցաքննութեան կանչուած է 928 մարդ, առգրաւուած է 744 ապօրինի զէնք:

ԲԱՅՄԱՆԱԶԱՐ...

Սկիզբ՝ էջ 5

վարչապետը, նախարարներն ու երեսփոխանները պետք է կեցուածք ունենան Արցախի մէջ տեղի ունեցածին նկատմամբ մոռնալով, որ շահեր ունին Թուրքիոյ եւ Ազրայէճանի մէջ:

Յայտնենք, որ Ատրպէյճանի դեսպանատան ապահովութիւնը ստանձնած ուժերը ցուցարարներուն նկատմամբ կիրարկեցին անհամաչափ ուժ, որուն պատճառով արձանագրուեցան բախումներ: 30 վիրաւորներ փոխադրուեցան հիւանդանոց:

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ ՇՈՒՇԻ ԵՒ ՀԱԼԵՊԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Կիրակի, 8 Հոկտեմբեր 2023-ին, Հայկաի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յետ Ս. Եւ Ամահ Պատարագին, տեղի պիտի ունենայ Շուշիի պաշտպանութեան եւ Հայկաի պատերազմի նահատակներու հոգեհանգստեան արարողութիւն:

Յետ հոգեհանգստեան արարողութեան, ցաւակցութիւնները պիտի ընդունուին ԱՄԺ Տան «Լեւոն Շանթ» սրահէն ներս:

ԻՆՉ Է ՃՈՅՅԻՆ...

Սկիզբ՝ էջ 4

ի նպաստ մեզի պետք է դառնայ չարաչար կը սխալիք: Յոյցերը առանձին ո՛չ մէկ ժամանակ կրնան յստակ ու երկարամեծ յաջողութիւններու առաջնորդել: Յոյցերուն ազդեցութիւնը կարելի չէ անմիջապէս շոյափել ու պետք չէ բարձր կամ անիրականանալի ակնկալիքներ ունենալ ցոյցերէն: Յոյցերու կամ որեւէ բողոքի գործողութեան յաջողութիւնն ու ազդեցութիւնը տարբեր գործօններէ կախեալ են: Սակայն, պետք է ընդունիլ, որ մե՛ծ, համատարած, շարունակական բողոքի ցոյցերը կրնան յստակ ճշում գործադրել քաղաքական գործիչներուն որոշումներ կայացնողներուն վրայ՝ լուծելու առկա խնդիրները կամ դէպքերու զարգացման ուղին փոխելու: Փաստ կ'ուզէ՞ք, նայեցէ՛ք պատմութեան, օրինակ. ԱՄՆ-ի քաղաքացիական իրաւունքներու շարժումը, Կանտոնի շարժումը, Արաբական գարունը, Հարաւային Աֆրիկէի Ափարթայտի շարժումը, կանանց իրաւունքներու ցոյցերը եւ այլն:

8. Անցնող եօթանասուն տարիներուն, Սփիւռքի կամ Հայաստանի մէջ կազմակերպուած ցոյցերը նպաստած են Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման, 1988-ի Արցախեան շարժման ու յաղթանակին, Հայաստանի ընկերատնտեսական հարցերու արժարժման ու լուծման, Թուրքիան ու Ատրպէյճանը ճնշելու-սանձելու, հայկական հարցերու մէջ Սփիւռքի ներգրաւածութեան բարձրացման, 2008-ի Ֆուլթալայի դիւանագիտութեան ձախողութեան, քեսապահայութեան տուն դարձին, տարակարծութիւնները մէկ կողմ դնելով Սփիւռքի մէջ միասնական աշխատանքի առիթներ ստեղծելուն, հայկական հարցին շուրջ միջազգային իրազեկութեան մակարդակի բարելաման, Արցախի գորակցութեան, 2018-ին ՀՀ-ի մէջ իշխանափոխութեան, Սփիւռքի մէջ հայկական ինքնութեան պահպանման ու համահայկական աշխարհատարած ցանց մը ստեղծելուն:

9. Նպատակաւոր ու ողջմիտ ցոյց կազմակերպելը կամ անոր մասնակցիլը ո՛չ մէկ ժամանակ արգելք է այլ ձեռնարկներ ու միջոցառումներ կազմակերպելուն: Նմանապէս անոնք չեն խանգարէր զօրանալու գործընթացներուն: Աւելի պարզ, եթէ հրաժարիք ցոյցեր կազմակերպելէ, զօրաւոր ու ուժեղ պիտի չդառնանք: Տարբեր խնդիր է, որ առաջնահերթութիւնը պետք է համազգային հզօրացման վրայ կեդրոնացնել, խելամիտ ո՛չ ոք կրնայ մերժել այս առաջարկը, բայց ցոյցերը չեն խոչընդոտէր զօրանալուն եւ ուժեղանալուն, ընդհակառակը. կը նպաստեն:

10. Յոյցերը սահմանափակ կարողութիւններ ու հնարաւորութիւններ ունեցող հանրութիւններուն հաւաքաբար գործելու սակաւաթիւ միջոցներն են: Յոյցերու փոխարէն ի՞նչ միջոցառում կ'առաջարկէք: Գերծանր ու ճգնաժամային պահերուն, ցոյցի մասնակցիլը, նուազագոյնը տունը նստելէն, բան մը չընելէն, միայն քննադատելէն ու խաւարը անիծելէն լաւ է:

Սիրելի հակա-ցոյցականներ, վերոնշեալ բացատրութիւնները եթէ համոզիչ ու բաւարար չեն, շատ բարի, ոչ մէկ խնդիր: Մի՛ կազմակերպէք ու մի՛ մասնակցիք որեւէ ցոյցի կամ բողոքի գործողութեան: Ձեր տեսակետն ու որոշումը յարգելի են: Բայց միեւնոյն ժամանակ, ցանկալի է, որ չխանգարէք, արգելքներ չհանդիսանաք, բացասական տրամադրութիւններ չտարածէք, հեգնանքով չմօտենաք ցոյցերու մասնակիցներուն, չթերազնահատէք անոնց գործը, յուսախաբութեան ու յուսաբեկութեան մակարդակը չկրկնապատկէք: Ոչինչ, դուք մնացէ՛ք ցոյցերու հակառակ, բայց ջանացէ՛ք այլ ձեւով օգտակար դառնալ մեր հաւաքական բազմապիսի տագնապներուն ու արհաւիրքներուն:

Վերջաւորութեան, բողոքի ցոյցերը հասարակութեան խիղճն են, ձայնակուրկներուն բարձրախօսը՝ անարդարութեան պայմաններուն մէջ փոփոխութիւններ կերտողները:



ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅ
Հիմնադրված 1923

ՊԱՇՏՕՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ

Հայ Ծերանոցը կարիքը ունի՝

- Այցելու հաշուապահի,
- Զարտուղարի,
- Գիշերապահի,
- Մաքրարարի:

Յաւելեալ մանրամասնութեան համար դիմել հետեւեալ թիւերուն՝ 0944 867756 - 0991 488263:

www.kantsasar.com

www.kantsasar.com

www.kantsasar.com

ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



ԽՈՅ

Ձեր ծրագրերը գործի վերածելու համար երկար մի՛ սպասեք: Այլապես՝ ուրիշներ կ'իրականացնեն զանոնք:



ՑՈՒԼ

Ճշմարտության կողմնակից եք միշտ, որուն համար այլ յաճախ մարդիկ կը նեղանան իրականությունները ձեզմե լսելով: Չգուշութեամբ արտայայտուեցէ՛ք:



ԵՐԿՈՒՐԵԱԿ

Յաջողութեամբ պիտի սկսի ձեր շաբաթը: Ձեր աշխատասիրութիւնը գործի նոր ու շահաւետ ասպարեզներ պիտի առաջնորդէ:



ԽԵՑՁԵՏԻՆ

Ինքնավստահ ըլլալու պարագային պիտի յաղթահարէք ձեր սիրային հարցերը եւ երջանկութեան տիրանաք: Ձեր ներքին ձայնին ականջ տուէ՛ք:



ԱՌԻԾ

Երբեմն ականջ տուէ՛ք այլոց խորհուրդներուն: Եսակեղրոն մի՛ ըլլաք ձեր միութենական աշխատանքին մէջ:



ԿՈՅՍ

Տնտեսական որոշ դժուարութիւններ պիտի կարենաք յաղթահարել եթէ տնտեսող ըլլաք: Տնտեսելը խելամտութիւն է:



ԿՇԻՈՔ

Երբեմն չափազանց անկեղծութիւնը կը խանգարէ ձեր յարաբերութիւնները: Մի՛ փորձեք բոլորին հարցերը լուծելու համար սպառիչ աշխատանք տանիլ:



ԿԱՐԻՃ

Բարձր տրամադրութեամբ շաբաթը սկսելու համար հեռու մնացէ՛ք բացասական մարդոցմէ: Մարգանքն ու առողջ ապրելակերպը մի՛ անտեսեք:



ԱՂԵՂԱՍՈՐ

Ճամբորդութեան մը ծրագիր կը մշակէք: Շաբաթը նորութիւն պիտի բերէ ձեզի, կը մնայ օգտուիլ առաւելագոյն չափով:



ԱՅԾԵՂՋԻՐ

Գերճնշուած առօրեան կը խանգարէ ձեր առողջութիւնը: Դասաւորեցէ՛ք ձեր աշխատանքի ժամերը ու հանգիստի առիթ ստեղծեցէ՛ք:



ՋՐՅՈՍ

Ձախողութենէ մի՛ սարսափիք: Կեանքի մէջ ամեն բան կրնայ պատահիլ, ձախողութիւնը կրնայ յաջողութեան առաջին քայլը ցոյց տալ ձեզի:



ՋՈՒԿ

Բախտախաղերու մի՛ հաւատաք: Աշխատանքով վաստկեցէ՛ք ձեր առօրեան: Ձեր արդար աշխատանքին ու վաստակին շնորհիւ պիտի փայլիք:



ԿՈՃԱՊՂՊԵՂԻ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ

Կոճապղպեղը բուսական արմատ է, որ բազմաթիւ օգուտներ ունի մեր մարմնին եւ առողջութեան համար: Կոճապղպեղը դարեր շարունակ օգտագործուած է սննդեղէնի պատրաստութեան ընթացքին՝ իր բազմօգուտ յատկութիւններուն շնորհիւ:

Այս արմատը կրեւելքի ամենն նշանաւոր եւ կարեւոր բոյսերէն էր, յատկապէս արաբական եր-



կիրներու, Չինաստանի եւ Յնդկաստանի մէջ:

Ստորեւ կը ներկայացնենք կոճապղպեղի օգտակար քանի մը յատկութիւններ, որոնք կը բարելաւեն մեր առողջութիւնը եթէ կանոնաւորաբար սպառենք զայն:

1. Սրտխառնուքի դէմ
Յիւրութեան ընթացքին իտեալական է կոճապղպեղ օգտագործելը որպէս բնական դեղ սրտխառնուքի: Ան կ'օգնէ յաղթահարելու նաեւ քաղցկեղէ տառապաղներուն քիմիական դեղերով բուժման ընթացքին յառաջացած ստրտխառնուքը:
2. Մարսողական
Կոճապղպեղը կը թելադրեն անոնց, որոնք կը տառապին մարսողական հարցերէն:
3. Բնական հակաբորբոքային միջոց

Բորբոքումներ ունենալու պարագային կը թելադրուի կոճապղպեղի թէյը կամ փոշին օգ-



տագործել:

4. Կոկորդի ցաւի դէմ
Արհեստավարժ երգիչները կոճապղպեղի երկրպագուներ են: Կոճապղպեղը կը պաշտպանէ կոկորդը վարակներէն եւ ձայնալարերը փափուկ կը պահէ:
5. Մարմինը ջերմացնող
Կոճապղպեղը կը թելադրուի այն մարդոց, որոնք ծմբան յաճախ կը մտնեն: Անով պատրաստուած թէյը կազդուրիչ կ'ըլլայ ծմբան ցուրտին:
6. Կը նպաստէ նիւթափոխանակման
Այս արմատը յաճախակիօրէն օգտագործելով ձեր սնունդին մէջ, ձեր մարմնի նիւթափոխանակումը կը բարելաւուի, ինչ որ կը նպաստէ նաեւ նիւթափոխանակման:
7. Կը նպաստէ ճնշուածութեան մեղմացման
Կոճապղպեղը, որ կը պարունակէ սինոլ, կ'օգնէ նուազեցնելու անհանգստութեան մակարդակը, կը կարգաւորէ ճնշուածութիւնը եւ մարմնին կը պարգեւէ հանգիստի զգացում:
8. Կը նուազեցնէ մկանային ցաւերը
Եթէ օրուան ընթացքին մկանային ծանր աշխատանք տարած ըլլաք, օգտագործեցէ՛ք կոճապղպեղը, որպէսզի ձեր մկանները հանգստանան:

ԻՆՉՊԷՍ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԿՈՃԱՊՂՊԵՂԸ

Կարելի է այս արմատը օգտագործել թարմ վիճակով, թէյով կամ փոշիացած վիճակով:

ԿՈՃԱՊՂՊԵՂՈՎ ԹԵՅ

Բաղադրութիւն

- 3 ճաշի դգալ մեղր
- 1 կիտրոն
- 1 թարմ կոճապղպեղ

Պատրաստութիւն

Թարմ կոճապղպեղը կտրտել եւ եռացնել մօտ 10 վայրկեան: Ապա մարել կրակը ու անւեցնել կիտրոնի շերտերը: Թեյամանին կափարիչը գոցել եւ թողուլ, որ հանգչի 2-3 վայրկեան: Խմելէ առաջ անւեցնել մեղրը՝ ըստ ճաշակի:



Մարզական



Ռաֆֆի Սիկանյան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

-Սուրիոյ ֆուտբոլի ֆիդելիտետի երկրորդ փուլի մրցումներուն, Յալթայի գոյգ խումբերը՝ Ահլին եւ Յուրիէն քաղաքապետարանի դաշտին վրայ



հանդիպեցան: Յանդիպումը ավարտեցաւ 1 - 0 հաշուով՝ ի նպաստ Ահլին, իսկ Դամասկոսի Ուստի եւ Ճեյշի հանդիպումը վերջ գտաւ 1 - 1 հաւասարութեամբ: Նոյն արդիւնքով ավարտեցաւ Նաեւ Ճապլէ եւ Զարամէ խումբերուն միջեւ մրցումը:

-Յալթայի Յուրիէ ակումբի վարչութիւնը ֆուտբոլի առաջին խումբի մարզիչ նշանակեց եգիպտացի Ահմատ Յաֆէզը, որ փոխարինեց հրաժարած Մուքաուամ Ապպասը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՌԵԱԼ ՄԱՏՐԻՑ ԳԼԽԱՌՈՐԵՑ ԱՐԻՍՏԱԿԸ


Սպանիոյ ֆուտբոլի ֆիդելիտետի 8-րդ փուլի մրցումներու շրջագիծին մէջ, մայրաքաղաքի ՌԵԱԼ Մատրիտը 3 - 0 արդիւնքով յաջողեցաւ պարտութեան մատնել Ճիրոնան եւ գլխաւորել աղիւսակը: Իտալացի Գարլօ Անշելոթիի գլխաւորած կազմը 15-րդ վայրկեանին կրցաւ ցնցել մրցակիցին դարպասը խոսելոյի միջոցով, որմէ քանի մը վայրկեան տեղ Չուամիլին կրկնապատկեց արդիւնքը:



Երկրորդ կիսախաղին, մատրիտեան կազմը շարունակեց իր յաջող խաղարկութիւնը եւ քանի մը առիթներով վտանգի ենթարկեց Ճիրոնայի դարպասը: Նախքան ավարտը ճուտ Պելմիսկիամ կրցաւ նշանակել կազմին երրորդ կողմը: Ընտրիլի այս արդիւնքին, ՌԵԱԼ 21 կետով գլխաւորեց աղիւսակը, իրեն յաջորդեց Պարսելոնան՝ 20 եւ Ճիրոնան՝ 19 կետով:

ԼԻՎԵՐՓՈՒԼ ԱՆԱՐԴԱՐ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ԿՐԵՑ

Անգլիոյ առաջնութեան 7-րդ փուլի մրցումներուն, Լոնտոնի Թոթենհամը իր դաշտին վրայ հիւրընկալեց Լիվըրփուլը եւ յաղթեց անոր 2 - 1 արդիւնքով: Թոթենհամի խաղին հաշիւը բացաւ հարաւորիացի յարձակող Սոն Հին Միլը: Գերմանացի Իւրկէն Կլոփի գլխաւորած կազմը հաւասարութիւն արձանագրեց առաջին խաղակիստն յաւելեալ ժամանակին՝ հոլանտացի յարձակող Կոտի Զակարոյի միջոցով: 94-րդ վայրկեանին, Լիվըրփուլի քամիոնցի պաշտպանողական խաղացողը սխալելով գնդակը ուղղեց իր դարպասը եւ արդիւնքը շրջեցաւ՝ ի նպաստ Թոթենհամին: Անցնենք, որ հանդիպումի իրաւարարը կարմիր քարտով Լիվըրփուլէն երկու խաղացողներ դաշտէն հեռացուց, ինչպէս նաեւ կազմը գրկեց արդար կողմը, որուն համար Անգլիոյ ֆուտբոլի դաշնութիւնը իր ներողամտութիւնը խնայեց Լիվըրփուլէն:



ԽԱԶԲԱՌ (ՄԽ 458)

Պատրաստեց՝ Մարինա Զիւլբոջեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Հորիզոնական

- 1- Ճգնաժամ: Կոպիտ:
- 2- Մշուշ: Կրկին:
- 3- Օրերով քնացնող հիւանդութիւն: Անձնական դերանուն:
- 4- Նոր: Յակառակ՝ տառի մը անունը: Պարապ ամանի ծանրութիւն:
- 5- Յակառակ՝ էական բայ: Կրկնուած ձայնաւորներ:
- 6- Անպաշտպան: Զուն:
- 7- Կանգար: Ժամանում: Յակառակ՝ ցուցական դերանուն:
- 8- Փոքրացնող մասնիկ: Յոգնակերտ մասնիկ: Թռչուններու խումբ:
- 9- Յակառակ՝ աղղղի թել: Եղանակաւոր ձայն: Եգիպտական անապատ:
- 10- Յակառակ՝ ոչ նոր: Սարսափ:
- 11- Փոքր:
- 12- Ձայնակիչ: Պայքարելու տրամադիր:

Ուղղահայեաց

- 1- Տքնաջան, պատժական աշխատանք: Անձնական դերանուն:
- 2- Աստուածային:
- 3- Յակառակ՝ իրերայաջորդ տառեր: Յակառակ՝ 306: Վանայ լիճի կղզիներէն:
- 4- Յակառակ՝ անձնական դերանուն: Մտապատկեր: Զիմքի տպաւորութիւն:
- 5- Խորք: Կրկնուած բաղաձայններ: Յակառակ՝ անձնական դերանուն:
- 6- Ծաբոնական թատրոն: Յոգնակերտ մասնիկ: Կրկնուած բաղաձայններ:
- 7- Դանիել Վարուժանի բանաստեղծութիւններու ժողովածուներէն:
- 8- Փոքրացնող մասնիկ: Յակառակ՝ յարաբերական դերանուն:
- 9- Յեռահար զէնք: Անձնական դերանուն: Լեւոն Ծանթի երկերէն: «..... Մարդը»:
- 10- Կրկնուած բաղաձայններ: Կտրիճ: Անձնական դերանուն:
- 11- Կրկնուած ձայնաւորներ: Սուրիական լրատու գործակալութիւն:
- 12- Ուրախ-գուարթ: Կիսալուսին:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 457)

ԼՈՒՐԵՐ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	լ	ա	ա	բ	է	ր	ձ	ն	ր	լ	ա	
2	տ	է	ր	գ	ն	մ	շ	ա	ա	ա	ր	
3	է	ե	ւ	ձ			ա	յ	ի			
4	փ	ա	է	մ	չ	ն	լ	ի				
5	ա	մ	ա	ր	ա	ա		ն	ն	ն	լ	
6	ն	մ	ա	ր	տ	ն	ւ	ն	ի	ա		
7	ա	լ	ն	տ	լ			լ	ն	կ		
8	կ	ն	ւ	ա	ն	ա	գ			ն		
9	է	ր	կ					ր	ն	կ	է	ր
10	ր			է	ա	ն	ւ	ա	ա	է		
11	տ	ր	ա	ր	ա	ն	ր	ն	ր	ա		
12		ա	ա	ղ	տ	ա	ա	ա	ր	է	ա	ն

Երկուշաբթի 9/10 16° 31°	Երեքշաբթի 10/10 16° 31°	Չորեքշաբթի 11/10 16° 31°	Հինգշաբթի 12/10 17° 30°	Ուրբաթ 13/10 18° 32°	Շաբաթ 14/10 17° 31°	Կիրակի 15/10 16° 32°
---	---	--	---	--	---	--

ԱՐՅԱՆԻ... Մկիզբ՝ էջ 1

Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մեջ մատուցուեցաւ Ս. Եւ Անմահ Պատարագ: Ս. Պատարագը մատուցեց Եւ յաւուր պատշաճի քարոզեց Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թմի առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեանը:



Մեջ, առաջին հերթին, նշեց Վարագայ Ս. Խաչին տօնին կարեւորութիւնը՝ յայտնելով, որ Ս. Խաչի չորս տօներէն վերջինը՝ Վարագայ Ս. Խաչը, յատուկ է հայ եկեղեցւոյ: Ան անդրադարձաւ պատմութեան մէջ հայ ժողովուրդին «խաչելութիւններուն» եւ ընդձեռն պատմութեան ընթացքին տառապանքներուն դիմաց մեր ժողովուրդին ցուցաբերած հաւատքին զօրութիւնը:

Սրբազանը ըսաւ, որ Ս. Խաչի տօները առիթ են մեր կեանքին մէջ վերահաստատելու Խաչին շարժիչ ուժը եւ Խաչեային փրկագործական զօրութիւնը: Մանրամասնելով Վարագայ Ս. Խաչի տօնը, ան ըսաւ, որ 7-րդ դարուն Ներսէս Գ. Շինող Կաթողիկոսին օրով հաստատուած է այս տօնը, երբ Վարագ լերան վրայ Թորիկ ու Յովէ ուխտաւոր եկեղեցականներու անդով արօթքներով ու ճրգնութեամբ, երկնային հրաշքով մը կը յայտնաբերուի Ս. Հռիփսիմէ Կոյսին պատկանող Ս. Խաչին մասուկը:

Անդրադառնալով ներկայ կացութեան, քարոզիչ սրբազանը նշեց, որ 4-րդ դարէն ի վեր հայ ժողովուրդին ինքնութեան անքակտելի արժեքներ դարձած ազգութիւնն ու քրիստոնէութիւնը կ'արտացոլան պատմութեան մէջ: Կը տեսնենք, որ հայութիւնը, Զրիստոսի նման Խաչի ճամբէն քալելով, տակաւին կը բարձրացնէ «Խաչ քո եղիցի մեզ ապաւեն, Տէր Յիսուս» աղօթքը, յատկապէս այս օրերուս, որովհետեւ այսօր Նոյն եաթաղանը կը բարձրանայ մեր ազգի հերոսական Արցախի ու արցախահայութեան վիզին՝ ընդմիջտ սպառնալով ոչնչացնել Հայաստանն ու հայութիւնը: Զարոգի ընթացքին Թորգոմ սրբազանը իր աղօթքը բարձրացուց առ Աստուած. «Աստուած Անմեկնելի, բազում են ճամբաները, անիմանալի՝ փրկագործական հրաշքերը, մինչ Զու ամենաբուժիչ ու յաղթական ներգործութեանդ ամեն ժամանակէ աւելի այսօր է, որ պէտք ունինք մենք՝ հայ ազգը ու հայրենիքը, տարագիր ու սգաւոր արցախահայութիւնը, վիրաւոր ու սովատանջ հայ մանուկները, նահատակուած

առիծ գաւակներու հերոսածին մայրերը, քոյրերն ու եղբայրները, դաւադրաբար բռնազրուած արծուէրոյն մեր Արցախը, եւ տակաւին՝ ամենահսկիչ Զու նայուածքիդ իսկ առջեւ՝ անորոշութեան ու նոր պատերազմներու վտանգին մէջ տուայտող Հայաստան աշխարհը ու անլուր տառապանքներու քրքանին մէջ բռնուած սփիւռքահայութիւնը, որոնք միահամուռ պաղատանքով

վր, Տէր Ամենագօր, Սուրբ Խաչի՜դ իսկ զօրութիւնը կ'աղերսեն աշխարհի բոլոր անկիւններէն անխտիր»:

Ապա, սրբազան հայրը քաջալերեց հաւատացեալները չյուսահատելու, չընկրկելու ու սատանային կամքին չյանձնուելու՝ այնքան ատեն, որ Ս. Խաչը ունինք որպէս ապաւեն ու պաշտպան: Փաստօրէն, Եղեռնի օրերուն Խաչը եղաւ Գողգոթայի ճամբաներէն յարութիւն տուող մեր նախահայրերուն եւ մեզի պարգեւեց կեանք ու աստուածային օրհնութիւններ: «Ինչպէս Յեղասպանութեան, նաեւ՝ ներկայի ծանր օրերու մէջ, շնորհիւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելաշուք Ս. Աթոռին ժողովրդանուէր ծառայութեան, Աստուծոյ օգնութեամբ կարելի եղաւ մարդասիրական, կառուցողական, ընկերային, ազգային ու բարեսիրական տեսակ-տեսակ բնոյթի օժանդակութիւնն իրականացնել եւ Հայաստան-Արցախին, եւ հայկական վիրաւոր գաղութներու կեանքին մէջ», ընդձեռն սրբազանը եւ աւելցուց, որ մեր Ս. Աթոռը մինչեւ օրս կը շարունակէ իր ժողովուրդին կողքին ըլլալ:

Զարոգի աւարտին, սրբազան հայրը իր երախտագիտութիւնը յայտնեց Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, որ արցախահայութեան նուիրուած գանազան ձեռնարկներու եւ ազգակերտ աշխատանքներու կողքին, վերջերս նաեւ Հայրապետական Ս. Աթոռին կողմէ յառաջացուցած է յատուկ մարմին մը, որ շուտով կը սկսի մարդասիրական նոր ծրագիրներու ճամբով անհրաժեշտ օժանդակութիւն մատակարարել գաղթական ու տարագիր արցախահայութեան:

Յաւարտ Ս. Պատարագին, հանդիսապետութեամբ Նորին Սըրբութեան, տեղի ունեցաւ Արցախին ու արցախահայութեան նուիրուած յատուկ աղօթք եւ կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ՝ Արցախ հայրենիքին պաշտպանութեան ու պահպանութեան համար նահատակուած մեր հերոս հայորդիներու հոգիներուն համար:

ՀԱՍՆԱԳՈՒՅԻՆ...

Մկիզբ՝ էջ 1

Նակալին հրաշագործ ներգործութեամբ բարիքներով ողողուի արցա-

Բ. արցունք թափել, այնպէս ինչպէս Զրիստոս լացաւ Երուսաղէմի վրայ:

Գ. Զրտիկը թափել, այնպէս ինչպէս Զրիստոս տագնապելով ար-



խահայութեան եւ հայ ժողովուրդին կեանքը: Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեց-

եան կաթիլներու նման քրտիկը թափեց: Տէր Մաշտոց նշեց, թէ քրիստո-



ւոյ մէջ Սուրբ Եւ Անմահ Պատարագին հանդիսապետեց Առաջնորդ Սրբազան Հայրը: Պատարագ մատուցեց Եւ յաւուր պատշաճի քարոզեց Արժ. Տ. Մաշտոց Ա. Բնյ. Արապաթեան, ներկայութեամբ՝ Ազգ. Վարչութեան անդամներու, ազգային մարմիններու ու միութիւններու ներկայացուցիչներու եւ հաւատացեալ ժողովուրդին:

Նեական կեանքը, որուն հիմնական շաղախը կը կազմէ նահատակներ



րուն եւ մարտիրոսներուն թափած արիւնը, մեր հաւատքի ակունքը կը կազմէ, որուն վրայ հաստատուած է եկեղեցին:

Զահանայ Հայրը աղօթեց Արցախի եւ արցախահայութեան համար, հրաւիրելով բոլորը անտարբեր վիճակէն դուրս գալու, զգաստանալու, պատրաստ ըլլալու ազգորդին մեր գործած մեղքերուն համար ապաշխարելու, արիւն, արցունք, քրտիկը թափելու եւ Խաչին զօրութեան ապաւինելով փրկութեան արժանի դառնալու:



կեանք չէ, այլ կ'ենթադրէ՝ Ա. արիւն թափել, այնպէս ինչպէս Զրիստոս իր արիւնը թափելով սրբագործեց իսաչը: